



**«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՉԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2023**

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ

Վեցերորդ սերնդի պատերազմի զենքեր և
սպառազինություններ

ԱՌԱՐԿԱ

Նախնական զինվորական պատրաստություն

ՀԵՂԻՆԱԿ

Լևոն Խաչատրյան

ՄԱՐԶ

ք. Երևան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

ԵՕՀՊՄ քոլեջ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	3
Գլուխ 1. Պատերազմների դասակարգումն ըստ սերունդների և օգտագործված սպառազինությունները	5
Գլուխ 2. Վեցերորդ սերնդի պատերազմի վարման հայեցակարգն ու կիրառվող սպառազինությունը	9
Եզրակացություն.....	1818
Օգտագործված գրականության ցանկ	1919

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Մույն թեմայի արդիականությունը պայմանավորված է Վեցերորդ սերնդի զենքերի և սպառազինությունների բնութագրիչների և առանձնահատկությունների խորքային ուսումնասիրման անհրաժեշտությամբ: Պատերազմներն ուղեկցել են մարդուն իր ծագման օրվանից մինչև մեր օրեր: Դրանք մշտապես ունեցել են ավերիչ և ողբերգական հետևանքներ մարդկության համար: Ընդհանրապես մարդկության ողջ պատմությունն ուղղորդվել և այսօր էլ ուղղորդվում է պետությունների միջև արյունալի և ավերիչ պատերազմներով:

Ազգամիջյան հակամարտությունները, պետությունների միջև սահմանային բախումները, տեղական, տարածաշրջանային և համաշխարհային մակարդակի պատերազմները նպաստել են ռազմական գործողություններում կիրառվող զենքերի և սպառազինությունների կատարելագործմանը: Հետագայում ռազմագիտության մեջ ընդունված է դարձել զենքերի և սպառազինությունների կատարելագործման և արդիականացման փուլերը դասակարգել համապատասխան կիրառված զինատեսակների և դրանց կրած փոփոխությունների:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Հետազոտական աշխատանքի նպատակն արդի շրջանում աշխարհի տարբեր պետությունների կողմից ռազմական գործողություններում կիրառվող Վեցերորդ սերնդի զենքերի և սպառազինությունների բնութագրիչների և առանձնահատկությունների խորքային ուսումնասիրումն է:

Վերոնշյալ նպատակի իրականացման համար առաջ են քաշվել հետևյալ **խնդիրները.**

- ուսումնասիրել պատերազմների դասակարգումն ըստ սերունդների և օգտագործված սպառազինությունների;
- ներկայացնել Վեցերորդ սերնդի պատերազմի վարման հայեցակարգը;
- վերլուծել Վեցերորդ սերնդի պատերազմի զենքերի և սպառազինությունների հնարավորություններն ու առավելությունները;

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտական աշխատանքի ուսումնասիրության օբյեկտ են հանդիսանում Վեցերորդ սերնդի պատերազմի զենքերն ու սպառազինությունները, իսկ ուսումնասիրության առարկա՝ ըստ սերունդների պատերազմների դասակարգումը, Վեցերորդ սերնդի պատերազմի վարման հայեցակարգը, Վեցերորդ սերնդի պատերազմի զենքերի և սպառազինությունների առանձնահատկությունները, հնարավորություններն ու առավելությունները:

Հետազոտության մեթոդաբանությունը: Հետազոտական աշխատանքի ուսումնասիրման ընթացքում կիրառվել են էմպիրիկ հետազոտության (դիտման, չափման, համեմատման) մեթոդները, որոնք հնարավորություն են ընձեռել հետազոտել և համեմատական վերլուծություն իրականացնել բոլոր սերնդի պատերազմներում կիրառվող զենքերի ու սպառազինությունների առանձնահատկությունների միջև:

Հետազոտության կառուցվածքը: Հետազոտական աշխատանքը բաղկացած է բովանդակությունից, ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, ինչպես նաև օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի ընդհանուր ծավալը՝ 23 էջ:

Առաջին գլխում (*«Պատերազմների դասակարգումն ըստ սերունդների և օգտագործված սպառազինությունների»*) ըստ սերունդների և կիրառվող զինատեսակների ներկայացված է պատերազմների դասակարգումը, յուրաքանչյուր սերնդի պատերազմին բնորոշ առանձնահատկություններն ու մյուսների նկատմամբ ունեցած առավելությունները:

Երկրորդ գլխում (*«Վեցերորդ սերնդի պատերազմի վարման հայեցակարգն ու կիրառվող սպառազինությունը»*) ներկայացվել է Վեցերորդ սերնդի պատերազմի վարման հայեցակարգի բովանդակությունն ու կարևոր դրույթները, Վեցերորդ սերնդի պատերազմի ընթացքում կիրառվող զենքերի և սպառազինությունների առանձնահատկությունները և դրանց ընձեռած հնարավորությունները:

Գրականության տեսություն: Հետազոտական աշխատանքի ուսումնասիրության ընթացքում տեղեկատվության կարևոր աղբյուր են հանդիսացել ինչպես հայ, այնպես էլ ռուս ռազմագետների աշխատությունները, ինչպես նաև համացանցային ռեսուրսները: Դրանց միջից հատկապես կառանձնացնեինք Ա. Հովհաննիսյանի¹, Մ. Հովսեփյանի², Գ. Ռայսկու³, Վ. Սլիպչենկոյի⁴, Մ. Տրեբինի⁵ և մյուսների աշխատությունները:

¹ Տե՛ս Հովհաննիսյան Ա., «Օդային գերակայություն : Օդային հարձակման միջոցների և հակաօդային պաշտպանության հակամարտությունը ռեակտիվ դարաշրջանում», Երևան, 2010; Հովհաննիսյան Ա., «Ռազմարվեստ», հատոր 1, Երևան, 2021;

² Տե՛ս Հովսեփյան Մ., «Հայաստանը՝ Հինգերորդ սերնդի պատերազմի «թատերաբեմում» // . Ամբերդ տեղեկագիր, 2020, № 5:

³ Տե՛ս Райский Д., «Концепция войн шестого поколения в контексте международной безопасности» // Вестник Санкт-Петербургского университета Сер. 6, 2009, Вып. 3.

⁴ Տե՛ս Слипченко В., «Войны шестого поколения: оружие и военное искусство будущего», Москва, 2002.

⁵ Տե՛ս Требин М., «Войны XXI века», Москва, 2005.

Գլուխ 1. Պատերազմների դասակարգումն ըստ սերունդների և օգտագործված սպառազինությունները

Պատերազմներն ուղղորդել են մարդկությանն իր գոյության ողջ պատմության ընթացքում: Այսօր պատերազմների՝ որպես ռազմական պայքարի միջոցների և ուղիների բովանդակությունն առավել ամբողջական արտահայտվում է այսպես կոչված «սերնդի պատերազմ» հասկացության ներքո: Հետխորհրդային տարածաշրջանի որոշ երկրներում պատերազմը դասակարգվում է համաձայն որոշ չափորոշիչների, որոնք հիմնականում կապված են պատերազմում կիրառված զենքերի ու սպառազինության տեսակների հետ: Ռուս բարձրաստիճան գինվորական (զեներալ-մայոր), ռազմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վլադիմիր Սլիպչենկոն այն եզակի գիտնականներից մեկն է, ով հանգամանորեն ուսումնասիրել է «սերնդի պատերազմների» տեսությունը:

Մարդկության պատմության ողջ ընթացքում տարբեր հեղինակներ, գիտնականներ և ռազմագետներ նոր գինատեսակներն ու ռազմական գործողությունների վարումն ուսումնասիրել են տարբեր դիտանկյուններից: Պատմական տարբեր ժամանակաշրջաններում, յուրաքանչյուր սերնդի հետ միասին, տեղի է ունեցել անցում պատերազմների վարման նոր միջոցների և մեթոդների, որոնց գուգահեռ յուրաքանչյուր պետությունում բանակաշինության գործընթացում տեղի է ունեցել զենքերի, սպառազինության և մարտերի վարման ռազմավարության արդիականացում ու կատարելագործում: Իր հիմնարար աշխատությունում Վ. Սլիպչենկոն բացահայտել և ներկայացրել է ընդամենը վեց «սերնդի պատերազմ»⁶:

Հաջորդիվ ներկայացնենք բոլոր վեց սերնդի պատերազմները, դրանց շրջանում մարտերի վարմանը բնորոշ առանձնահատկությունները:

⁶ Ст'ю Слипченко В., «Войны шестого поколения: оружие и военное искусство будущего», Москва, 2002, 384 с.

1-ին սերնդի պատերազմ

Առաջին սերնդի պատերազմին բնորոշ է սառը զենքի (սուր, նիզակ, նետեր և այլն) օգտագործումը: Առաջին սերնդի պատերազմում տեղի էր ունեցել քարե և փայթե իրերից անցում ամուր երկաթից պատրաստված զինատեսակների, որոնք ակտիվորեն կիրառվում էին ռազմական գործողություններում: Նման պատերազմներն ունեցել են ավելի քան 4 հազար տարվա պատմություն, որի ընթացքում փոխվում էին ինչպես զինատեսակների ձևերը, այնպես էլ դրանց նյութական բաղադրիչությունը:

2-րդ սերնդի պատերազմ

Երկրորդ սերնդի պատերազմներին բնորոշ են վառողի, պայթուցիկ նյութերի, ինչպես նաև հրազենի առաջին տեսակի ձևերի օգտագործումը: XII – XIII դդ. Չինաստանում հայտնագործվեց վառողը, որն ակտիվորեն սկսեց կիրառվել ռազմական գործողությունների ընթացքում: Սկսեցին պատրաստվել հրացաններ և հրանոթներ, որոնց միջոցով հնարավոր էր հակառակորդին հասցնել մահացու վիրավորում և վնասվածքներ բավականին մեծ տարածության և հեռավորության վրա:

Հրետանային ռազմատեխնիկայի ստեղծումն ու աստիճանաբար կատարելագործումը հեղափոխական նշանակություն ունեցան այդ ժամանակաշրջանի պատերազմական գործողություններում: Այստեղ կարելի է համարել, որ միայն XIII դարում աշխարհի տարբեր ծայրերում ընթացող ռազմական գործողություններն ամբողջությամբ անցում կատարեցին հրազենին: Երկրորդ սերնդի պատերազմն իր ձևով և տեսակով բոլորովին այլ բնույթի պատերազմ էր:

3-րդ սերնդի պատերազմ

Երրորդ սերնդի պատերազմն արդեն կապված էր հրաձգային զենքերի ստեղծման հետ: Պատերազմներում բեկումնային փոփոխություններ տեղի ունեցան միայն XVIII – XIX դարերում: Այս ժամանակաշրջանի գիտությունն ու ռազմարդյունաբերությունը հնարավորություն ընձեռեցին ստեղծել հրետանային և թնդանոթային զենքեր: Որոշ զինատեսակներ դարձան բազմակի լիցքավորվող, առավել հեռահար և թիրախային:

Երրորդ սերնդի պատերազմների փուլում ռազմական գործողություններն էապես փոխեցին իրենց բնույթը՝ դառնալով առավել զանգվածային, կտրուկ փոխվեցին պատերազմի մասշտաբները, ինչի արդյունքում պատերազմող պետությունները մարտերը սկսեցին վարել հիմնականում խրամատային և հեռավոր դիրքերից, չնայած որոշակի շփումը մարտերում արունակում էր պահպանվել:

4-րդ սերնդի պատերազմ

Չորրորդ սերնդի պատերազմին բնորոշ է ավտոմատացված հրազենի ստեղծումը: Առաջին ինքնաձիգների ստեղծումից հետո որոշ ավտոմատացված զենքեր տեղադրվեցին տանկերի, զրահապատ մեքենաների, ինքնագնաց հրետանային կայանների, ինքնաթիռների, սովորական նավերի և սուզանավերի, ինչպես նաև այլ տիպի ռազմատեխնիկաների վրա:

Չորրորդ սերնդի պատերազմներն արդեն ընթանում էին բավականին մեծ հեռավորության վրայից: Նման պատերազմներում առաջնագծում կիրառվում էին ինչպես հարձակողական և պաշտպանական, այնպես էլ ռազմավարական նշանակության գործողություններ: Չորրորդ սերնդին բնորոշ պատերազմի որոշ էլեմենտներ և մեթոդներ շարունակում են կիրառվել նաև ժամանակակից պատերազմներում: Ըստ որոշ ռազմական փորձագետների, Ռուսաստանը, հետխորհրդային և նախկին սոցիալիստական տարածաշրջանի, որոշ ասիական, աֆրիկյան և լատինաամերիկյան պետություններ, իրենց ռազմարդյունաբերությանը հանդերձ, դեռևս արմատացած են չորրորդ սերնդի պատերազմներում:

5-րդ սերնդի պատերազմ

1945թ. օգոստոսի սկզբին (6 և 9-ին), Երկրորդ համաշխարհային պատերազմի վերջնամասում, ԱՄՆ-ի կողմից ճապոնական Խերոսիմա և Նագասակի քաղաքների վրա ատոմային զենքի, իսկ դրանից չորս տարի անց՝ 1949թ-ին ԽՍՀՄ-ի կողմից նմանատիպ զենքի փորձարկմամբ ազդարարվեց միջուկային զենքի դարաշրջանը: Ավելի ուշ, երկու գերտերությունները փորձարկեցին ջերմամիջուկային (ջրածնային) զենքը. ԱՄՆ-ն 1952թ-ին, իսկ ԽՍՀՄ-ն՝ 1953թ-ին:

Հետագայում այս երկու գերտերություններից բացի միջուկային զենք ստեղծեցին ևս յոթ պետություններ՝ Մեծ Բրիտանիան (1952թ.), Ֆրանսիան (1960թ.), Չինաստանը (1964թ.), Իսրայելը (1968թ.), Հնդկաստանը (1974թ.), Պակիստանը (1998թ.) և Հյուսիսային Կորեան (2005թ.)⁷: Այսպիսով, աշխարհում գոյություն ունեն թվով ինը միջուկային պետություններ և ևս ինը (Բրազիլիա, Եգիպտոս, Իրան, Թայվան, Թուրքիա, Հարավային Կորեա, Ճապոնիա, Ուկրաինա) ունեն ցանկություն և բավարար ներուժ միջուկային զենք ստեղծելու համար:

Ժամանակին միջուկային զենքին տիրապետել են նաև Հարավաֆրիկյան Հանրապետությունը (1979 – 1989թթ.), Բելառուսը (1991 – 1994թթ.), Ուկրաինան (1991 –

⁷ Տե՛ս Կ. Բ. Բ. Բ., «История ядерного оружия» // Международный журнал гуманитарных и естественных наук, История и археология, № 5-2(80), 2023, с. 7 – 9.

1992թթ.) և Ղազախստանը (1991 – 1992թթ.): Վերջին երեքն իրենց տարածքում գտնվող միջուկային հրթիռներն ամբողջությամբ վերադարձրել են Խորհրդային Միության իրավահաջորդ հանդիսացող Ռուսաստանի Դաշնությանը: Ընդ որում, Հարավաֆրիկյան Հանրապետությունը թերևս աշխարհի միակ պետությունն է, որը 1979թ-ին միջուկային զենք ստեղծելուց հետո 1989թ-ին կամովին հրաժարվում միջուկային զենքից:

Ինչպես արդեն պարզ դարձավ, միջուկային զենքի առաջին փորձարկումից ի վեր, պատերազմական գործողություններում այս զինատեսակը կիրառվել է միայն երկու անգամ՝ ԱՄՆ-ի ռազմաօդային ուժերի կողմից Երկրորդ համաշխարհային պատերազմում գրեթե անձնատուր եղած և իրենից էական սպառնալիք չներկայացնող Ճապոնիայի վրա:

Միջուկային պատերազմի հավանականությունը մեծացավ 1961 – 1962թթ. ընթացքում, Միացյալ Նահանգների և Խորհրդային Միության միջև ընթացող Կարիբյան ճգնաժամի ֆոնին, սակայն դիվանագիտական միջամտության արդյունքում կանխվեց Երրորդ համաշխարհային պատերազմը, որում միջուկային զենքի կիրառումն առավել քան հավանական էր:

6-րդ սերնդի պատերազմ

Վեցերորդ սերնդի պատերազմն ի հայտ է եկել գերճշգրիտ, հեռահար, հեռակառավարվող զինատեսակների ստեղծման հետ մեկտեղ, որոնք այսօր ապահովում են ժամանակակից տեղեկատվական համալիրները: Վ. Սլիպչենկոն վեցերորդ սերնդի պատերազմը բնորոշել է որպես «անշփում պատերազմ»: Այն իրենից ներկայացնում է մշակվող տեսակի (6-րդ սերնդի) պատերազմ, որը ներառում է ոչ ռազմական (հետախուզական, քաղաքական-հոգեբանական, տեղեկության ևն) գործողություններ, ինչպես նաև ավտոմատացված (անզինվոր) ռազմական գործողություններ⁸:

Սլիպչենկոն իր աշխատությունում ենթադրում է, որ մոտ ապագայում Յոթերորդ սերնդի պատերազմին անցում կարող է կատարվել, որտեղ ռազմական գործողությունները կընթանան «ինտելեկտուալ» ռազմական ռորոտների, ԱԹՄ-ների, ինքնակառավարվող ռազմատեխնիկայի և հրթիռների կիրառմամբ: Սլիպչենկոն այն համոզման է հակված, որ Վեցերորդ սերնդի պատերազմներն ընթանում են գրեթե ավտոմատացված և ռորոտացված ռազմատեխնիկաների ակտիվ կիրառմամբ, մինչդեռ Յոթերորդ սերնդի պատերազմներում դրանք գերակշռող դեր են ունենալու և մարդկային գործոնը նվազագույնի է հասցվելու:

⁸ Տե՛ս Չիլինգարյան Դ., Երզնկյան Ե., «Պաշտպանական-անվտանգային տերմինների հայերեն-ռուսերեն-անգլերեն բացատրական բառարան», Գյումրի, «ՀՀ ՊՆ ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ», 2015, 1196 էջ:

Գլուխ 2. Վեցերորդ սերնդի պատերազմի վարման հայեցակարգն ու կիրառվող սպառազինությունը

Հրագենային զենքերի ձևափոխմանն անդրադարձել են տարբեր հեղինակներ: Ժամանակի ընթացքում դրանց արդիականացման և կրած փոփոխությունների մասին հանգամանորեն ներկայացրել է Վ. Ֆեդորովն իր «Հրաձգային զենքերի էվոլյուցիան» երկհատորյա աշխատությունում⁹: Մակայն այսօր մեծ կարևորություն է տրվում ոչ այնքան զենքերի և ռազմատեխնիկայի արդիականացմանը, որքան դրանց կիրառման միջոցով սեփական զինված ուժերում գոհերի թվի նվազեցմանը և թշնամուն ավելի թիրախային և մահացու հարվածներ հասցնելուն: Այդ իսկ պատճառով, Վեցերորդ սերնդի պատերազմներում մեծ տեղ են տրվում անօդաչու թռչող սարքերին (ԱԹՍ), ինքնակառավարվող և ինքնառնչացվող ռազմատեխնիկային և հրթիռներին: Բացի այդ, արդի շրջանում շատ զարգացած և զարգացող պետություններ իրենց ռազմարդյունաբերության և բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության ոլորտում մեծ կարևորություն են տվել ԱԹՍ-ների արտադրությանը և ռազմական ռոբոտների մշակմանը: Այս նոր սպառազինության մոտ ապագայում լիարժեք հնարավորություն կընձեռեն անշփում պատերազմներ վարել և թշնամուն ծանր վնասներ պատճառել:

Մարդկության էվոլյուցիայի ընթացքում փոփոխություն են կրել ինչպես ռազմական պայքարի միջոցները, զենքերն ու սպառազինությունը, այնպես էլ ռազմական գործողությունների վարման միջոցներն ու ռազմավարությունը: Ռազմագիտության մեջ նման փոփոխությունները, որոնք ճակատագրական նշանակություն են ունեցել մարդկության ողջ պատմության համար, ընդունված է անվանել «հեղափոխություն ռազմական գործում»: Վ. Սլիպչենկոն իր «Վեցերորդ սերնդի պատերազմներ. Ապագայի զենքեր և ռազմական արվեստ» աշխատությունում բերում է այս երևույթի զարգացման հետևյալ սահմանումը. *«Ռազմական գործում հեղափոխությունն այն արմատական և որակական փոփոխություններն են, որոնք տեղի են ունենում ռազմական պայքարի միջոցներում գիտատեխնիկական առաջընթացի ներազդեցության արդյունքում և որոնք արմատապես փոխում են զինված ուժերի կառուցվածքն ու պատրաստությունը, ռազմական գործողություններ ծավալելու միջոցները»*¹⁰:

⁹ Ст'у Фёдоров В., «Эволюция стрелкового оружия», В 2-х частях, Москва: Воениздат, 1938-1939, Ч. I. Развитие ручного огнестрельного оружия от заряжения с дула и кремневого замка до магазинных винтовок, 1938, 199 с.; Ч. II. Развитие автоматического оружия, 1939, 315 с.

¹⁰ Ст'у Слипченко В., նշվ. աշխ., էջ 55:

Այս թեզն առավել արդիական է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ժամանակակից պետությունների ռազմաքաղաքական դոկտրինները կառուցվում են «տեխնոկրատական» պարադիգմի վրա, որն առանցքային դեր և նշանակություն է տալիս ռազմարդյունաբերական տեխնոլոգիաներին, որոնք հնարավորություն են ընձեռում այդ պետություններին պահպանել ու բարելավել իրենց դիրքերը միջազգային ասպարեզում¹¹:

Վեցերորդ սերնդի պատերազմն առավել բնորոշ է XXI դարին: Տարբեր ռազմագետներ այն բնորոշում են որպես մարտավարական մասշտաբի անշփում և առանց միջուկային զենքի կիրառման պատերազմ: Հակամարտող կողմերի կարևոր նպատակը հակառակորդի տնտեսական ներուժի ոչնչացումն, ինչպես նաև վերջինիս քաղաքական համակարգի փոփոխումն է: Եվ եթե Հինգերորդ սերնդի պատերազմի հայեցակարգի հիմքում ներդրվել էին միջուկային-հրթիռային զենքի զանգվածային կիրառումը, ապա Վեցերորդ սերնդի պատերազմի հայեցակարգն առավելապես հիմնվում է գերճշգրիտ և հեռահար զենքի լայնամասշտաբ կիրառման, թշնամուն թիրախային հարվածներ հասցնելու վրա, որոնք էլ հանդիսանում են վերջինիս հիմնարար սկզբունքները¹²:

Նավատորմի ադմիրալ Ի.Մ. Կապիտանցան իր «Ուժեղ նավատորմ – ուժեղ Ռուսաստան» աշխատության մեջ տվել է գերճշգրիտ զենքի առավել ամբողջական սահմանումը. *«Գերճշգրիտ զենքն իրենից ներկայացնում է այնպիսի կառավարվող զենք, որով փոքր թիրախների խոցելիության հավանականությունն առաջին իսկ արձակումից մոտ են միասնությանը, նույնիսկ եթե թիրախը գտնվում է միջմայրցամաքային հեռավորության վրա, ցանկացած իրավիճակում»*¹³:

Եվ հենց գերճշգրիտ զենքերի ու սպառազինության զանգվածային կիրառումն է հանդիսանում ժամանակակից ռազմարվեստի կարևոր բաղադրիչներից մեկը, որոնց շնորհիվ Վեցերորդ սերնդի պատերազմները տարբերվում են նախորդ սերնդի պատերազմներից:

Վեցերորդ սերնդի պատերազմների սկզբունքային տարբերությունների և առանձնահատկությունների շարքին կարելի է դասել նաև.

1. Միասնական տեղեկատվական դաշտի ստեղծումը, որի շրջանակներում գործում է հակամարտող կողմի ամբողջ ռազմական խմբավորումը: Ռազմական գործողություններն անցկացվում են իրական ժամանակի պայմաններում, որտեղ տեղեկությունները ստացվում են անմիջապես, ուղիղ

¹¹ St' u Малыгина А., «Феномен ядерного оружия в современном мире и перспективы режима нераспространения ядерного оружия»: автореф. дис. ... канд. полит. наук. СПб., 2007, с. 25 – 26.

¹² St' u Райский Д., «Концепция войн шестого поколения в контексте международной безопасности» // Вестник Санкт-Петербургского университета Сер. 6, 2009, Вып. 3, с. 343.

¹³ St' u Капитанец И., «Сильный флот — сильная Россия», Москва, 2006, с. 367.

ելթերում ռազմական գործողությունների անգամ ամենաթեժ կետերից: Նման տեղեկատվական դաշտի ստեղծումը յուրաքանչյուր ռազմական թատերաբեմում, աշխարհի յուրաքանչյուր կետում հասանելի է միայն այն պետությանը, որն իր տնօրինության տակ ունի հզոր արբանյակային սարքավորումներ և համակարգեր:

2. Ընդլայնվում է ռազմական գործողությունների վարման միջոցների ցանկը: Արբանյակների դերի և կարևորության մեծացման հետ մեկտեղ առաջ է գալիս դրանք խոցող զենքերի ստեղծման պահանջ: Արբանյակները որոշ հզոր պետությունների հնարավորություն են ընձեռում տիեզերքից վերահսկել հակառակորդի զորաշարժը, բացահայտել նրա զորամասերի և զինապահեստների տեղակայման վայրերը, խրամատներն ու ռազմապատարանները, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում խոցել դրանք: Սա ևս իր հերթին նպաստում է գերճշգրիտ զենքերի ստեղծմանն ու ռազմական գործողություններում զանգվածային կիրառմանը: Այս համատեքստում մեծ կարևորություն է ձեռք բերում հատկապես ռադիոէլեկտրոնային պայքարը: Հակառակորդի տարածքիում վերջինիս միասնական տեղեկատվական համակարգերի ոչնչացումը համարժեք է սեփական տեղեկատվական անվտանգության բարձրացման և հակառակորդի նկատմամբ տեղեկատվական առավելության ապահովմանը:
3. Նոր բնույթի ռազմական հակամարտություններում էլ ավելի է մեծացել տեղեկատվական-հոգեբանական պայքարը: Մ.Պ. Տրեբինն իր «*XXI դարի պատերազմներ*» գրքում նշում է, որ Իրաքի դեմ ԱՄՆ-ի և Հյուսիսատլանտյան դաշինքի կոալիցիոն ուժերի կողմից «Փոթորիկ անապատում» ռազմական գործողությունների ընթացքում իրաքյան ուժերին հասցվել էր հետևյալ վնասը՝ 10% ռազմաօդային ուժերին, 18% զրահապատ տեխնիկային, 20%՝ հրետանուն, իսկ վերոնշյալ ուժերի քարոզչության արդյունքում իրաքյան բանակի մարտական ոգին նվազել էր շուրջ 40 – 60%-ով, ինչի արդյունքում մեծապես նվազել էր Արևմուտքի զինված ուժերին հակազդելու իրաքյան բանակի ներուժը¹⁴:

Այնուամենայնիվ, որոշ հետազոտողներ, ինչպես Սլիպչենկոն, ենթադրում են, որ ցանցային սկզբունքի հիման վրա կառուցված և մեծ քանակության գերճշգրիտ սպառազինության տիրապետող գերտերությունների բանակները կարող են ծանր հարված

¹⁴ Տե՛ս Մ. Տրեբին, «Войны XXI века», Москва, 2005, с. 215.

հասցնել թշնամու զինված ուժերին, իսկ վերջիններս, իրենց հերթին, անգամ միջուկային զենքի տնօրինելով հանդերձ, չեն համարձակվի կիրառել այն՝ զգուշանալով պատասխան միջուկային հարվածներից: Խոսելով նման զենքի չտիրապետող պետության հետ հակամարտության մասին, ապա անպատժելիության պատրանքն ի հայտ է գալիս էլ ավելի մեծ աստիճանի: Միևնույն ժամանակ կարող ենք պնդել, որ միջուկային զսպումն այլևս կորցնում է իր երբեմնի դերը և դրան փոխարինման է գալիս ռազմավարական զսպումը, որը հիմնված է գերտերությունների կողմից գերճշգրիտ խոցելիությունն ապահովող սպառազինության կուտակման վրա:

Հաշվի առնելով, որ XXI դարձել է «ռեսուրսների պատերազմ», հակառակորդի տարածում սեփական վերահսկողությունը հաստատելը դառնալու է պատերազմ վարող պետությունների առաջնահերթություններից մեկը: Իսկ Վեցերորդ սերնդի պատերազմում հակառակորդի տարածքում վերահսկողություն հաստատելն անհնար է դառնում, քանի դեռ այդ պետության տարածք ոտք չի դրել զինվորը: Այստեղից կարելի է հետևություն անել, որ Վեցերորդ սերնդի պատերազմի հայեցակարգն էական փոփոխություններ է իրականացրել զինված պայքարի բնույթում, սակայն դեռևս փոփոխությունների չի հանգեցրել ժամանակակից միջազգային անվտանգության համակարգում:

Ներկա դրությամբ աշխարհում կան մի շարք պետություններ, որոնք էապես առաջընթաց են արձանագրել ռազմարդյունաբերությունում և բարձր տեխնոլոգիաների արդյունաբերությունում, որի շնորհիվ սկսել են ստեղծել գերճշգրիտ խոցելիությունն ապահովող զենքեր և սպառազինություններ: Այս պետությունները շարունակաբար իրականացնում են սեփական սպառազինության արդիականացում և կատարելագործում՝ փորձելով հետ չմնալ Վեցերորդ սերնդի պատերազմի հայեցակարգով պահանջվող հարձակվողական և պաշտպանական միջոցներից:

Անկասկած այստեղ առաջնորդի դերում հանդես է գալիս Միացյալ Նահանգները, որն արդեն առաջիկա երկու-երեք տասնամյակներին ընդառաջ մշակել է իր զենքերի և սպառազինության կատարելագործման ու ռազմավարության արդիականացման նախագծեր: Չնայած պետական բյուջեում առկա որոշակի սղությանը, իր զինված ուժերի, զենքերի և սպառազինության արդիականացման ուղղությամբ մեծ ջանքեր է գործադրում նաև Ռուսաստանը Դաշնությունը, որը ոչ միայն փորձում է հետ չմնալ Միացյալ Նահանգներից, այլև որոշ զենքերի և սպառազինության տեսակների ստեղծման առումով անգամ գերազանցում է վերջինիս¹⁵:

Չինաստանը և աշխարհի մյուս գերտերությունները ևս ձգտում են արդիականացնել իրենց զինված ուժերն ու սպառազինությունը՝ այն համապատասխանեցնելով Վեցերորդ

¹⁵ Ст'у Райский Д., նշվ. աշխ., էջ 347 – 348:

սերնդի պատերազմի չափորոշիչներին: Օրինակ 2020թ-ին միջազգային և բրիտանական տարբեր պարբերականներ ազդարարեցին, որ Մեծ Բրիտանիայի զինված ուժերն առաջիկա մեկ-երկու տասնամյակների ընթացքում պատրաստվում են ամբողջությամբ հրաժարվել տանկերից, որոնք կփոխարինեն հեռակառավարվող, թերևաշարժ և գերնշգրիտ խոցելիություն ապահովող ռազմատեխնիկայով:

Մեծ Բրիտանիայի Պաշտպանության նախարարությունից նման որոշումը հիմնավորեցին նրանով, որ տանկերն արդեն վաղուց հնացել են և դարձել առավել խոցելի Վեցերորդ սերնդի պատերազմի պայմաններում: Մեծ Բրիտանիայի Պաշտպանության նախարարությունում այն համոզման են, որ տանկերի արտադրության փոխարեն հարկավոր է հիմնական շեշտադրումը, ներդրումներն ու ֆինանսավորումը կատարել կիրքերսպառազինության, տիեզերական և այլ սպառազինությունների արդիականացման ու կատարելագործման վրա¹⁶, որոնք առավել մեծ դեր կխաղան ինչպես Վեցերորդ, այնպես էլ Յոթերորդ սերնդի պատերազմներում:

Եթե ժամանակակից ռազմական գործողություններում պատերազմների վարման մարտավարությունն էական փոփոխություններ չի կրել, այլ փոխվել է հիմնականում օպերատիվ մշակույթը կամ տակտիկան, ապա չի կարելի համարել, որ արմատական կամ հեղափոխական փոփոխություններ են տեղի ունեցել ռազմական գործում: Ավելի շուտ, խոսքը գնում է գիտատեխնիկական բնագավառում գրանցված արդյունքների կամ ռազմատեխնիկական հեղափոխության մասին, որը մասնակիորեն է ազդել Վեցերորդ սերնդի պատերազմի զենքերի և սպառազինության կիրառման արդյունավետության վրա:

Վեցերորդ սերնդի պատերազմ վարելու համար աշխարհի տնտեսապես թույլ զարգացած և զարգացող պետություններից շատերը դեռևս չունեն բավարար ներուժ, միջուկային զինապահեստ և համապատասխան զենքեր ու սպառազինություններ: XXI դարի սկզբին այդպիսի պետություններից որոշները հնարավորություն կունենան ձեռք բերել և կիրառել Վեցերորդ սերնդի պատերազմներին բնորոշ զենքեր և սպառազինություններ, որոշ պետություններ էլ հնարավորություն կունենան իրենց տարածքում, այլ հզոր և զարգացած պետությունների հետ համատեղ, արտադրել նմանատիպ զենքեր և սպառազինություններ, որոնք հնարավորություն կընձեռեն վարել անշփում պատերազմներ և մարտեր՝ հեռահար տարածության վրա: Այս ամենի համատեքստում հարկավոր է կարևոր ուշադրություն դարձնել հատկապես պետությունների հրթիռա-միջուկային զենքերի արդիականացմանը:

¹⁶ Տե՛ս BBC, Британия может отказаться от танков. Усилит ли это позиции России? – <https://www.bbc.com/russian/features-53913167> (բացված՝ 02. 09. 2023)

Վեցերորդ սերնդի պատերազմներին բնորոշ զինատեսակների ձեռքբերման, արտադրության և կիրառության մասին քննարկումները հայ փորձագիտական շրջանակներում ակտիվացան հատկապես 2016թ. Ապրիլյան (Քառօրյա) պատերազմից հետո: 2016թ. ապրիլի 2-ին ադրբեջանական բանակի կողմից արցախա-ադրբեջանական սահմանամերձ շրջանների նկատմամբ իրականացրած կարճատև ռազմական ագրեսիայի ընթացքում ադրբեջանական զինված ուժերի կողմից խորհրդային և ռուսական զենքերի և սպառազինության հետ զուգահեռ կիրառվեցին թուրքական, իսրայելական, բրիտանական արտադրության ռազմատեխնիկա և ավիատեխնիկա (թուրքական «Bayraktar TB2» ԱԹՍ-ներ, իսրայելական արտադրության «Spike» հակատանկային հրթիռային կայաններ, ռուսական արտադրության ТОС-1А «Солнцепёк» (կամ Բուրատինո (ՀԿՌՀ)) համազարկային կրակի՝ ծանր հրանետային համակարգ և այլ զինատեսակներ):

Չնայած դրանք մեծ ինտենսիվությամբ չկիրառվեցին կարճատև պատերազմի ընթացքում, սակայն դրանց այդ կարճ ժամանակահատվածում Արցախի Պաշտպանության բանակի ստորաբաժանումներին դրանց պատճառած վնասը բավականին մեծ էր (Քառօրյա պատերազմի ընթացքում ԱՀ ՊԲ-ն տվել է 75 զոհ)¹⁷: Գերժամանակակից, գերճշգրիտ և հեռահար զենքերի ու սպառազինության լայնամասշտաբ կիրառումն ադրբեջանական զինված ուժերի կողմից եղավ 2020թ. սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 9-ն ընկած ժամանակահատվածում, Արցախյան Երկրորդ պատերազմի ժամանակ:

Քառասունչորսօրյա պատերազմի ընթացքում ադրբեջանական բանակի կողմից խորհրդային և ռուսական արտադրության զենքերի և սպառազինության հետ զուգահեռ կիրառվեցին գերժամանակակից թուրքական, իսրայելական, արևմտյան և նաև ադրբեջանական արտադրության գերժամանակակից զենքեր և սպառազինություններ: Պատերազմի ավարտից հետո ադրբեջանական և թուրքական ռազմաքաղաքական դեկավարության կողմից բազմակի հաստատվեց թուրքական արտադրության ԱԹՍ-ների գերակայությունը, որոնք մեծ վնասներ հասցրեցին Արցախի Պաշտպանության բանակի զինված ուժերին:

Աղյուսակ 1. Արցախյան Երկրորդ պատերազմում և Ռուս-ուկրաինական պատերազմում կիրառված գերժամանակակից սպառազինությունները

¹⁷ Տե՛ս Artsakh Press, «Ապրիլյան քառօրյա պատերազմի զոհերը 75-ն են. պետք է ֆիքսել ապրիլի առաջին 4 օրվա զոհերի թիվը. Արժրուն Հովհաննիսյան» – <https://artsakhpress.am/arm/news/104223/aprilyan-qarorya-paterazmi-zohery-75-n-en-petq-e-fiqsel-aprili-arajin-4-orva-zoheri-tivy-artsrun-hovhannisyanyan.html> (03. 04. 2019)

		
<p>Թուրքական արտադրության «Bayraktar TB2» ԱԹՍ</p>	<p>Իրանական արտադրության Shahed 136 («Герань-2») ԱԹՍ</p>	<p>Հայկական արտադրության «Կռունկ» և «Բազե» ԱԹՍ- ներ</p>
		
<p>Ռուսական արտադրության «Орион» ԱԹՍ</p>	<p>Իսրայելական արտադրության «Elbit Hermes 900» ԱԹՍ</p>	<p>Իսրայելական արտադրության «IAI Harop» հետախուզական- հարվածային ԱԹՍ</p>
		
<p>Ռուսական արտադրության РС-28 «Сармат» ռազմավարական հրթիռային համակարգ</p>	<p>Ամերիկյան արտադրության MIM-104 «Patriot» զենիթ- հրթիռային համալիր</p>	<p>Ռուսական արտադրության «С-400» զենիթ-հրթիռային համալիր</p>

		
<p>Ռուսական արտադրության 9- A-7660 «Кинжал» գերձայնային ավիացիոն հրթիռային համալիր</p>	<p>Ամերիկյան արտադրության F-35 կործանիչ</p>	<p>Չինական արտադրության «Chengdu J-20» կործանիչ</p>

Ինչպես տեսնում ենք, **աղ. 1**-ում ներկայացված են հայկական և արտասահմանյան զենքեր և սպառազինություններ, որոնք դասվում են Հինգերորդ և Վեցերորդ սերնդի պատերազմներում կիրառվող զենքերի և սպառազինությունների շարքին: Արցախյան Երկրորդ պատերազմում (2020թ. սեպտեմբեր - նոյեմբեր), Ռուս-ուկրաինական պատերազմում (2022թ. փետրվարից ի վեր), Լիբիայում և Սիրիայում ընթացող քաղաքացիական պատերազմներում, ինչպես նաև աշխարհի տարբեր ծայրերում ընթացող զինված հակամարտություններում այսօր կիրառվում են ամերիկյան (նաև արևմտյան), ռուսական, չինական և այլ ռազմապես զարգացած ու գերժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած պետությունների արտադրած Հինգերորդ և Վեցերորդ սերնդի զենքեր և սպառազինություններ:

Այսօր տարբեր հայ փորձագիտական շրջանակներ և ռազմագետներ ակտիվ հետազոտական աշխատանքներ են իրականացնում Հինգերորդ, Վեցերորդ և նույնիսկ Յոթերորդ սերնդի պատերազմներում կիրառվող զենքերի և սպառազինությունների առանձնահատկությունների, առավելություններ և ընձեռած հնարավորությունների քացահայտման ուղղությամբ: Ռազմագետների միջից հատկապես առանձնանում է ռազմական վերլուծաբան-փորձագետ, Հայաստանի պաշտպանության նախարարի մամուլի նախկին քարտուղար (2012 – 2020թթ.) Արծրուն Հովհաննիսյանն, ով իր մի շարք աշխատություններում անդրադարձել է Հինգերորդ և Վեցերորդ սերնդի պատերազմներում կիրառվող զենքերի և սպառազինության առանձնահատկություններին, դրանց առավելություններին և ընձեռած հնարավորություններին, խոսել դրանց դեմ Չորրորդ, Հինգերորդ և Վեցերորդ սերնդի զենքերով և սպառազինություններով պայքարի միջոցների

և մարտավարության մասին^{18 19}: Հինգերորդ և Վեցերորդ սերնդի պատերազմներում կիրառվող զենքերի ու սպառազինությունների, ինչպես նաև դրանց ընձեռած հնարավորությունների մասին գիտական հոդված է հեղինակել նաև Օրբելի վերլուծական կենտրոնի հետազոտող փորձագետ Մերի Հովսեփյանը²⁰:

¹⁸ Տե՛ս Հովհաննիսյան Ա., «Ռ-ազմարվեստ», հատոր 1, Երևան, 2021, 820 էջ:

¹⁹ Տե՛ս Հովհաննիսյան Ա., «Օդային գերակայություն : Օդային հարձակման միջոցների և հակաօդային պաշտպանության հակամարտությունը ռեակտիվ դարաշրջանում», Երևան, 2010, 372 էջ:

²⁰ Տե՛ս Հովսեփյան Մ., «Հայաստանը՝ Հինգերորդ սերնդի պատերազմի «թատերաբեմում» // . Ամբերդ տեղեկագիր, 2020, № 5, էջ 30 – 36:

Եզրակացություն

Այսպիսով, «Վեցերորդ սերնդի պատերազմի զենքեր և սպառազինություններ» թեմայով աշխատանքի ուսումնասիրության արդյունքում մեզ հաջողվեց հանգամանորեն ծանոթանալ մարդկության ողջ պատմության ընթացքում պատերազմներում կիրառվող զենքերի և սպառազինությունների կրած փոփոխություններին և կատարելագործման արդյունքում ձեռք բերված նոր հնարավորություններին: Մենք այսօր ապրում ենք Վեցերորդ սերնդի պատերազմի դարաշրջանում, չնայած որոշ պետություններ դեռևս տիրապետում են Չորրորդ և Հինգերորդ սերնդի զենքերի և սպառազինությունների, աշխարհի զարգացած ռազմարդյունաբերություն և բարձր տեխնոլոգիական արդյունաբերություն ունեցող մի քանի պետություն արդեն միջոցներ է ձեռնարկում Յոթերորդ սերնդի զենքերի և սպառազինության արտադրության ուղղությամբ:

Հետխորհրդային տարածաշրջանում, Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում, ինչպես նաև աշխարհի որոշ թեժ կետերում այսօր ակտիվորեն կիրառվում են Վեցերորդ սերնդի զենքեր և սպառազինություններ: Ծատ պետություններ, ինչպես օրինակ Հայաստանը, որոնք դեռևս չեն տիրապետում այդ սերնդի զենքերի և սպառազինությունների, մի քանի անգամ ավել վնասներ են կրում նման զենքերի և սպառազինությունների տիրապետող պետությունների հարձակման արդյունքում: Այս առումով կարևորություն է ձեռք բերում ոչ միայն Վեցերորդ սերնդի զենքերի և սպառազինությունների ձեռքբերումը կամ սեփական արտադրության խթանումը, այլև թշնամու կողմից նման զինատեսակների հարձակումներից պաշտպանումը, դրանց հայտնաբերումն ու ոչնչացումը:

Սույն հետազոտական աշխատանքի ուսումնասիրման արդյունքում ակնկալել ենք «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի շրջանակներում սովորողներին ծանոթացնել Վեցերորդ սերնդի պատերազմներում կիրառվող զենքերի և սպառազինությունների առանձնահատկություններին և հնարավորություններին, ինչպես նաև դրանց դեմ պայքարի միջոցներին:

Օգտագործված գրականության ցանկ

Գրականություն

1. Հովհաննիսյան Ա., «Ռազմարվեստ», հատոր 1, Երևան, 2021:
2. Հովհաննիսյան Ա., «Օդային գերակայություն : Օդային հարձակման միջոցների և հակաօդային պաշտպանության հակամարտությունը ռեակտիվ դարաշրջանում», Երևան, 2010:
3. Հովսեփյան Մ., «Հայաստանը՝ Հինգերորդ սերնդի պատերազմի «թասերաբեմում»» // . Ամբերդ տեղեկագիր, 2020, № 5:
4. Չիլինգարյան Դ., Երզնկյան Ե., «Պաշտպանական-անվտանգային տերմինների հայերեն-ռուսերեն-անգլերեն բացատրական բառարան», Գյումրի, «ՀՀ ՊՆ ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ», 2015:
5. Бызов В., «История ядерного оружия» // Международный журнал гуманитарных и естественных наук, История и археология, № 5-2(80), 2023.
6. Капитанец И., «Сильный флот — сильная Россия», Москва, 2006.
7. Малыгина А., «Феномен ядерного оружия в современном мире и перспективы режима нераспространения ядерного оружия»: автореф. дис. ... канд. полит. наук. СПб., 2007.
8. Райский Д., «Концепция войн шестого поколения в контексте международной безопасности» // Вестник Санкт-Петербургского университета Сер. 6, 2009, Вып. 3.
9. Слипченко В., «Войны шестого поколения: оружие и военное искусство будущего», Москва, 2002.
10. Требин М., «Войны XXI века», Москва, 2005.
11. Фёдоров В., «Эволюция стрелкового оружия», В 2-х частях, Москва: Воениздат, 1938-1939, Ч. I. Развитие ручного огнестрельного оружия от заряжения с дула и кремневого замка до магазинных винтовок, 1938; Ч. II. Развитие автоматического оружия, 1939.

Համացանցային ռեսուրսներ

12. Artsakh Press, «Ապրիլյան քառօրյա պատերազմի զոհերը 75-ն են. պետք է ֆիքսել ապրիլի առաջին 4 օրվա զոհերի թիվը. Արժրուև Հովհաննիսյան» – <https://artsakhpress.am/arm/news/104223/aprilyan-qarorya-paterazmi-zohery-75-n-en-petq-e-fiqsel-aprili-arajin-4-orva-zoheri-tivy-artsrun-hovhannisyan.html> (03. 04. 2019)
13. BBC, Британия может отказаться от танков. Усилит ли это позиции России? – <https://www.bbc.com/russian/features-53913167> (բացված՝ 02. 09. 2023)